Նախագիծ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված

Կ-465-04.02.2020-ՏՏԳԲ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ *հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ՝*

«***Կշռափաթեթավորում***՝ ապրանքատեսակի գնման/վաճառքի, սանիտարահիգիենիկ նորմերի, որակական հատկությունների, ամբողջականության ապահովման, ինչպես նաև կշռող սարքի օգտագործմամբ իրականացվող առևտրային գործարքների ժամանակ օգտագործելու նպատակով իրականացվող փաթեթավորում:»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-րդ մասով՝

«2.1. Առևտրի օբյեկտներում, առևտրի իրականացման վայրերում*, շրջիկ առևտրի կետերի միջոցով, շրջածախ առևտրի միջոցով, ինչպես նաև բացօթյա առևտրի իրականացման դեպքում մանրածախ առևտուր իրականացնելիս* ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3923 ապրանքային դիրքում գտնվող (բացառությամբ՝ 3923 29 900 0 ծածկագրին դասվող)՝ թաղանթի մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային պարկերի և տոպրակների (բացառությամբ կշռափաթեթավորման համար օգտագործվող պարկերի և երկրորդային հումքից արտադրված պարկերի և տոպրակների) վաճառքը (իրացնելը) արգելվում է:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

Երկրորդ ընթերցում
Լրամշակված

Կ-465-04.02.2020-ՏՏԳԲ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի ՆԻՍՏՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-465-04.02.2020-ՏՏԳԲ-011/1) ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ ~~հոդվածում ավելացնել նոր մաս՝ հետևյալ բովանդակությամբ~~ ***հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ***՝

«Կշռափաթեթավորում՝ ապրանքատեսակի գնման/վաճառքի, սանիտարահիգիենիկ նորմերի, որակական հատկությունների, ամբողջականության ապահովման, ինչպես նաև կշռող սարքի օգտագործմամբ իրականացվող առևտրային գործարքների ժամանակ օգտագործելու նպատակով իրականացվող փաթեթավորում:»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-րդ մասով՝

«2.1. Առևտրի օբյեկտներում ~~և~~, առևտրի իրականացման վայրերում ~~մանրածախ առևտուր իրականացնող վաճառողի կողմից~~, ***շրջիկ առևտրի կետերի միջոցով, շրջածախ առևտրի միջոցով, ինչպես նաև բացօթյա առևտրի իրականացման դեպքում մանրածախ առևտուր իրականացնելիս*** ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3923 ապրանքային դիրքում գտնվող (բացառությամբ՝ 3923 29 900 0 ծածկագրին դասվող)՝ թաղանթի մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային պարկերի և տոպրակների (բացառությամբ կշռափաթեթավորման համար օգտագործվող պարկերի և երկրորդային հումքից արտադրված պարկերի և տոպրակների) վաճառքը (իրացնելը) արգելվում է:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ25-Ի ՆԻՍՏՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ Կ-465-04.02.2020-ՏՏԳԲ-011/1) վերաբերյալ առաջարկությունների

N	Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը) ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Առևտրի և ծառայությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված	1. «Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում՝ «հոդվածում ավելացնել նոր մաս՝ հետևյալ բովանդակությամբ» բառերը փոխարինել «հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ՝» բառերով:	Ընդունվել է, Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է,

		«Առևտրի և ծառայությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված	2. «Առևտրի և ծառայությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածը լրամշակել՝ հաշվի առնելով, որ համաձայն «Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի դրույթների՝ մանրածախ առևտուր կարող է իրականացվել նաև շրջիկ առևտրի կետերում, ինչպես նաև շրջածախ և (կամ) բացօթյա առևտրի միջոցով:	Ընդունվել է, Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է,